

Երկրիս մակերևոյթը ցոյց կ'տայ մեզ թէ Վրաելքէն կ'ծագէ ախեղերաց լուսատու արփին, որու լուսովը կ'լուսաւորուին կարդ կարդ կիսազնախ երեսը բռնածքով աշխարհք :

Բայց մեր հայաստան աշխարհքը կ'երեւ այսօր թէ բնականին հակառակ կ'լուսաւորի և արևմուտքէն ողջունաբեր կ'գան նորան լուսատուք :

Ո՛ր հայը չի վկայեր մեզ հետ թէ մեր հայրենիքը հայաստան արևելք կ'ցածիր մթնշաղ մթնոլորտը արշալուսոյ նոր ծագած դեղին ու սպիտակ լուսովը կ'լուսաւորուի :

Բայց հիմա հայաստանի դիբքը փոխուած կ'երեւ վասնզի հիմա անդ արևուն այս արշալոյսը իր հորիզոնը չի՝ ողջուներ, իր լուսնամեւ դաշտերը լեռներու մէջէն լեռները ամպերու մէջ Վրաին Վրարատեան չի՝ լուսաւորեր և ուր Վասիս իւր ազատ գագաթովը կապցու երկնագաւառին մէջ կ'շղայ, հիմա արփւոյն ձաճանչ ները իր ձիւնապատ կողերուն ողջոյն չեն խոնարհիր :

Ա ասն զի՞ անդ ուր հիմա Վրարատեան Վրշալոյսը ողջունաբեր կ'լնթանայ, անդ և արփին Վրարատեան այնպիսի մթնոլորտ կ'ձառագայթէր երեմն, ուր հայրենասէր և Վզդասէրը կը կենցաղէին, ուր Նոյեան աղաւնին թէ կ'առնուր, ուր սուրբ Այահակեան բուրաստանը կ'ծաղկազարդէր և հուսկ Վասեաց աղաւնին և Վրեելք Վասիսին կ'թևակցէին :

Առքա հայաստան երկրին զարդք իմանալիք որոց մէկը Եղինեան ափունքը ցարդ կ'լուսաւորէ, միւսը Եղինեան դաշտէն թռչելով, հազիւ մինչ ՚ի միջերկրական և մինչ ՚ի Ա սոպոր իւր աւետաբեր ձայնը հնչեց ու հայաստանի հիւսիսակողմը դադար գտաւ :

Եւ արդարե Հայաստանի ուսումնական աշխարհքին սոքա եղան լուսատուք, սոքա իրենց հորիզոնական լոյսը հայրենեաց վրա ձառագայթելով, նորա մասաւորական երկերը և բնակչաց զարդացման ու կըթութեան վիճակը արեգակոն լուսէն աւելի փայլեցրին որոց օրինակաւ ազգային հայրենասիրական և ուսումնական, Ոյս, գիրք և Վմամթերթք Առուաստանի Վոգայնոց մէջ իւրեւ հայաստանի նոր լուսատուք՝ գիսաւոր աստղին նման երեցան ու անցան. Բայց նոցա ոգին հայկաղուն սերնդոց սրտի և հոգւոյն եռանդն ու աշխայժը վառեցին կըթութեան և զագացման սիրով և աղդային դաստիարակութեան :

Վ'յս եռանդը այս աշխայժը կ'բորբոքէր և Վրարատեան հայաստանի կաթուղիկէ մայր Եկեղեցւոյ հայոց սուրբ Եղինածնի կղերին սիրտը, գրաւոր հրատարակութեամբ ազգային դաստիարակութեան կամ գէթ իր կղերակցաց կըթութեանը հաղորդակից լինել, և նովին հայրենեաց կեդրոնէն հայրենի հնութեանց

Թանգարանը բանար և աղդային մեծագործութեանց պատմական յիշատակները կենդանացնէր ՚ի միիթարութիւն հեռաւոր աղդայնոց, որոնք ժամանակաւ հատուած գնալով ի պտոյսու այլեայլ աշխարհաց, առ գետս բաբելացոց կ'նատին և կ'յիշեն զհայաստան :

Վ յնափիսի յիշատակներ, զորոնք իրենց նախնիքը անմահացրած՝ իրենք ի համբոյր խոնարհելու կը կարօտին . այնպիսի յիշատակներ, որոնք լեռներու և ձորերու մէջ հիմա հոգեվարքի պէս կիսամահ կ'չնչեն . այնպիսի յիշատակներ, ուր երբեմն աստուածային պաշտօներգութիւնք կ'ինկէին . ուր հիմա բուոցն և գիշերահառոց կ'ոնցիւն կ'լսուին . այնպիսի յիշատակներ, ուր յառաջ քրիստոսանման հոգինք երենց բանաւոր հօտը կ'մակաղէին, ուր հիմա անբանից հօտք կ'պառակին և գաղանց ջոլեք կ'գիշերեն . այնպիսի վերջապէս յիշատակներ, որոց շենքն հայերուն գործքըն է, և շարքը անոնց սրտին և սիրոյն քրտանցը շաղախ, կամ այսպէս ասել, զորոնք իրենց նախնիքը թողլով կ'երթային ու կ'լային, իսկ իրենք յետագայք նոցագալով պիտի գան, և տեսնելով ցնծան .

Վ յս հայրենասիրական կենդանի զգացումը մեր սիրելի աղդայնոց սրտին մէջ վառելու բաղձանքնիս վաղուց կ'ստիպէր զմիաբանութիւնս, որոյ մասին մեղադրելի ենք ցարդ, բայց յայտնի է մեր սիրելի աղդին որ անցած ժամանակին մէջ անյօս և առանց քաջալերութեան էինք մեր ըստ կարի գրաւոր պարապմանցը մէջ, կամ թէ մեր հոգեւոր իսկ պարտաւորութեան . և չունեինք զմեղ յուսագրով այսպիսի ամսական հրատարակութեանց ձեռնարկելու .

Վ յժմ գոհութիւն Վ ստուծոյ որ չորհեց ընտրութեամբ Վ շքիս քաջալերով զմեղ ի գրաւորս, Վ ստուածարեալ հայրապետու մեր Տէր Կէորդ դ. ընդհանրական կաթողիկոս Վ մենայն Հայոց և հոգեւոր հայր ուխտի միաբանութեանս, որ իւր ուսումնասէր հոգւոյ եռանդեամբը խրախուսեց զմեղ մեր հոգեւոր պարտաւորութիւնը կատարելու և նոյն հոգեւոր կոչման վարկը անձին սեպհականելու . որով միայն կարող եմք ազգիս առաջնին անմեղագիր լինել . յուսալով թէ նու ևս պիտի սիրով կրկնէ մեղ հետ՝ լաւ է անագան՝ քան ոչ երբէք :

Ուստի և ահա ի խնամն Վ ստուածընտիր Տէեառնս մերոյ և քաղցը ակնարկութեամբ առ այժմ սմոյ յամիս կ'հրատարակեմք ի տպարանէ սրբոյ Վ թոռոյս Լ շմիածնի Վ րարատ անուն ամսագիրս հանգանակութեամբ ուխտի միաբանութեան ո՞ի ձեռնատութիւն Վ շքիս բարոյակ մն զարգացման, և ակնունիմք թէ որպէս բոլոր հոգեւորականք, նոյնպէս և ազգիս ընթերցով հասարակութիւնը բաժանորդ գրուելով Վ մագրիս ճշմարիս հայրենասիրաց զգացմանցն ևս բաժանորդ կ'լինի և մեք այս յուսով և ակնկալութեամբ կարող կ'լինիմք յետ այսորիկ կիսամսեայ հրատարակել զայն հայրենասէր չնորհիւ Վ ուաբելաջան հովուապետիս մերոյ, որ գնահատել գիտէ իւր հոգեւոր որդւոց իւրաքանչիւր գրաւոր վաստակը,

Վ քարատոյ մէջ բովանդակելիք նիւթերը պիտի լինին կրօնական, Պատմական,

բանասիր կան և բարոյական հետևեալ կարգաւորութեամբ :

Արօնականին մէջ պիտի դրուին եկեղեցական կարգաց և արարողութեանց վըատեղեկութիւններ, կաթուղիկոսաց գործեր, սուրբ հարց դրուածքներ, աղդային մատենագրաց կենսագրութիւններ և ձեռագիր մատենից ծանօթութիւններ :

Պատմականին մէջ՝ հայաստանի նոհանգաց, գաւառաց և քաղաքաց վըա աշխարհագրական տեղեկութիւններ. վանօրեից և մենաստանաց ստորագրութիւններ, որոց նշանագրներն են որ ժամանակ ժամանակ օրագրաց և ամսաթերթից նաև աշխարհագրութեանց մէջ թերութեամբ հրատարակուելով, հայրենասիրաց փափառը արթինցուցած են արդեն Հայաստանի վըա .

Ուանասիրականը պիտի լինի աղդիս զարգացման վեճակին դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ, ուսումնական ձառեր. Ճանապարհորդութիւններ, ուսանաւորներ, և նամականիք նախնեաց :

Ուարոյականին մէջ կ'դրուին թէ արտաքին և թէ սուրբ գրոց վճռական առածներու ընդլայնումներ առակներ, հանելուկք. ընդ որս և օրագրալուրք, զուարձալի և կարեոր դէպլքեր և այլ այսպիսիք :

Վայ բովանդակութեամբ Վարատը հրատարակելով կ'յուսանք որ նորա ոճն ևս հաճոյական լինի ընթերցողաց որ է հայաստանի Երեանց գաւառի պարզ աշխարհաբառ. լեզուն, որ աւելի մերձ է գրաբառին. կ'յուսանք գործեալ Տաճկաստանի մեր սիրելի Վագայնոց դիւրընտել առնել զայն հետզհետէ, երբ առիթ կ'ունենանք յօրագրալուրս խառն գործածել և Տաճկաստանի աղդային օրագրաց լեզուն :